ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

եւ յաւելած դաստիարակների համար

XVI ՏԱՐԻ № 1 ՅՈՒՆՒԱՐ 1898 Թ.

Մաճուկի երազը

Երազի մէջ օրօրոցում պիրուն մանուկիկը ճչաց. արդեօք ինչ տեսաւ երազում

որ յետոյ քաղցրիկ ժպտաց:

Քեզ տեսանելիս սիրտս թնդաց, համբր հրճանքով լցուեց, արդեօք յետոյ ինչ պատահեց, որ հատաչեց նա յանկարծ...

Մ.

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

I

Արուստ էր Ոսկան, հարուստ, մեծա-
տուն.
Ուներ նա շատ փող, պատիւ ու
անուն։
Նրա տան դուռը ձմեռ ու ամառ
Միշտ բաց էր լինում ամենքի համար,
Քանի՜ աղքատներ հաց էին ուտում
Նրա սեղանից ու նրան օրհնում!
Սակայն Ոսկանը գոհ չէր վիճակից,
Նա միշտ տխուր էր, տխուր, վշտալից։
Նրա հարազատ ու միակ որդին
Զընայած իր հօր խօսք ու խրատին՝
Գործով պարապել բընաւ չէր սիրում.
Ուտում էր, խմում ու հանգիստ քնում։
Նա ձրիակեր էր, վատնող ու չըռայլ—

Էնդուր էր հայրը տխուր ու մըռայլ։
Հայրը խրատեց, մտածեց երկար,
Ապա իր որդուն տարաւ այլ աշխարհ։
Նա որդուն յանձնեց մի մեծ վարպետի,
Որ նա սըրա մօտ բանի, աշխատի։
Վարպետն էլ սիրով ընդունեց նրան
Ու նշանակեց ռոճիկ տարեկան։
Ոսկանի որդուն չատ չէր բանեցնում,
Հարուստ հօր խաթրու լաւ էր պաշտպանում.
Կուշտ ուտացնում էր, խմացնում նըրան,
Հագցնում, խընամում իր որդու նման։
Իսկ երբ բոլորեց, լրացաւ տարին,
Որդին ըստացաւ վարձը լիովին։
Վարպետը նըրան հրաժեշտ տուեց,
Դէպի հայրենիք ճանապարհ դցեց։
Ոսկանի որդին, երբ որ տունն հասաւ,
Ստացած վողը իր հօրը տըւաւ։
Բոլոր վողերը հայրը համարեց,
Իսկոյն չըչէեցաւ, գետը չպրտեց.
Ապա ժպտալով նայեց իր որդուն,
Իսկ անհոգ որդին—ոչ ձայն, ոչ ծըպտուն։

II

Դարձեալ Ոսկանը տխուր էր, մըռայլ,
Իսկ նրա որդին ծոյլ էր ու չըռայլ։
Մի օր էլ հայրը՝ սաստիկ յուսահատ՝

Կանչեց իրա մօտ որդուն բէդովլաթ,
Խրատեց նըրան, նախատեց երկար
Ու տարաւ իր հետ մի հեռու աշխարհ։
Այստեղ նա որդուն տւեց վարպետի,
Որ նա սըրա մօտ բանի, աշխատի.
Վարպետին պատւեց որդու արատքը,
Իսկ ինքը դարձաւ իրանց աշխարհքը։
Այս նոր վարպետը առաջւան պէս չէր —
Նա չատ բարկացկոտ, անգութ ու չար էր։
Ոսկանի որդուն չէր խղճում երբէք,
Նրան տանջում էր նա գիշեր-ցերեկ,
Գործել էր տալիս, անվերջ բանեցնում,
Յոգնեցնում նըրան, հալումաշ անում.
Փուչ բանի համար դոչում էր ուժգին,
Բառնցքով խփում չլըն-քակոթին.
Նրան տըւածը դարդակ հաց էր չոր,
Մի ձեռք էլ մաշւած ու գլխատած չոր։
Եթէ նա լսէր իր հօր խրատները,
Չէր քաշիլ երբէք այս դառն օրեր։
Ոսկանի որդին այնքա՜ն նիհարեց,
Ու խեղճի վիզը այնքա՜ն բարակեց,
Որ նրա քթից եթէ բռնէին,
Տեղն ու տեղը կ՚աւանդէր հոգին։
Վերջապէս տարին մի կերպ լըրացաւ,
Ոսկանի որդին Տէրին վառք տըւաւ...

Նա իր վարպետից լսատացաւ ուռճիկ,
Պարկը չալակեց, գնաց հայրենիք։
Երբ որ տուն հասաւ, փողերը հանեց,
Հաշուեց, համարեց ու հօրը յանձնեց։
Երբ հայրը չրջուեց դէպի գետ կրկին,
Շտապով բռնեց հօր ձեռքը որդին.
«Հայր, աղաչում եմ, ջուրը մի գցիր,
Արիւն-քրտինքըս գոնէ խնայիր!
Շատ թանկ են նստել ինձ այդ փողերը,
Թանկ են տանջանքիս այդ պտուղները»!
Տխրութեան ամպը խակոյն չ քացաւ,
Ոսկանը հրճուեց և ուրախացաւ,
Նա յուզուած սրտով իր որդուն գրկեց,
Ճակատը պաչեց ու նրան օրհնեց։

—

Այնուհետ որդին սկըսեց բանել,
Հօր պատուէրները լսել, կատարել.
Նա թողեց նախկին իր չռայլ կեանքը,
Սկըսեց յարգել սուրբ աշխատանքը։

Ցառուբիւն Թումանեանց

ԼԷՕՆ — ԿԸՑՄՐ

(Հայկական աւանդութիւն)

1887 թ. ձմրան մէջն էր։

Պատահմամբ Մշու դաշտ, Խաս (*Հացիկ*) գիւղում հիւր եղայ մի առատասիրտ և ազնիւ մարդու տան։ Ըստ գիւղական սովորութեան՝ գիշերն հաւաքւեցան գիւղացիք մեր եղած օդայում և սկսեցին ղէսից - ղէնիից զրոյց տալ։ Ապա թախանձեցին մի ծերունու, որ բարեբարոյ և գիւղացիներից շատ բարձր էր երևում իր դատողութեամբ և թէ խօսակցութեամբ, մի հէքեաթ ասէ։ Ես ուշադրութիւնս լաբեցի, բայց՝ ծերունի Փուրթօն,—այսպէս էր նրա անունը,—ժխտում էր, առարկելով՝ որ կարող էին այն գիշեր իրանց հիւր եղող հեռաւոր եղբօր (*ինձ էր ակնարկում*) խօսքերը լսել...

—Ա՛յ, որդիք,—ասաց նա առոյգ ձայնով,—ամեն օր ինձ էք ասել տալիս, դուք բոլորդ էլ գիտէք իմ պատմութիւնների թիւը, բայց՝ լաւ է որ այս գիշեր էլ մեր եղբօրը լսենք, նա էլ ինձպէս վարժապետ մարդ է։

—Ափէ՛ (*ծօրնղբայր.*),—ընդմիջեցի ես,—ես հէքեաթ ասելու շնորհից զուրկ եմ, ընդհակառակը ցանկանում եմ քեզ լսել։ Քանի որ ինքդ վարժապետ ես եղել, ծանօթ ես գրականութեան, մեծ հիւրասիրութիւն արած կլինիս, եթէ պատմես ինձ փոխանակ Ջահ—Իսմայիլ, Թահար—Միրզայ և այլն

շինծու հէքեաթների, որ ապականում են մեր պարզ կեանքը, սկսէք մեր մէջին անցեալից, մեր ազգի աւանդութիւններից...

—Լա՛ւ: Ներեցէք, եղբայր, իրաւ է, ես վարժապետ եղել եմ, բայց ոչ այնպէս՝ ինչպէս դուն Հասկանում ես, իմ գիտութեան սահմանը կարճ է և անցուկ, խնդրեմ ասէիր ինձ, ինչպիսի հէքեաթներն են մեր կեանքից...

—Պաւիթ—Մհէր...

—Օ՜, Պաւիթ—Մհէր, դա եօթը մասն է, եօթը գլուխը է պէտք...

—Ախէ—Փուրթո՛,—կանխեց երիտասարդ ռէսը,—մեր հիւրը ցանկանում է հայի վրայ շինուած հէքեաթ լսել...

—Հասկանում եմ,—լուրջ կերպով պատասխանեց Ծերունին,—բայց Պաւիթ—Մհէր հէքեաթ չէ, այլ ճշմարիտ պատմութիւն, մենք ունինք ժողովրդի բերանում այդպիսի անթիւ պատմութիւններ:

—Ուրեմն՝—ասացի,—խնդրում եմ այդ անթիւ պատմութիւններից մինն ասել:

Ծերունին ձեռն երկարեց դէպի ծխատուփս, լեցուց իր չիբուխն և սկսեց ծխային հեղեղներ ժայթքելով խօսել.

—Ես քեզ կըպատմեմ կամ՝ Պատից մեծ Ադամանդը, կամ Լէօն—Կայսր, կամ Շահ—Աբաս *) կամ մի ուրիշ:

Ծերունին պատմեց այդ երեք աւանդութիւններն էլ, սղագրեցի յուշատետրիս մէջ:

Ախէ—Փրթուն ծխելով սկսեց իր հետաքրքիր պատմութիւնը:

I

Այսպէս էր այն ժամանակ մեր անբախտ Մշու դաշտը, նա ունէր մի հզօր տէր, որ նստած էր լինում Ծծմակ կամ Սասուն. երջանիկ էր ժողովուրդը՝ որովհետև տիրում էր հայ իշխան, փայլում էր մեր էլ վառ աստղը, որովհետև կուռ դաշտի մէջ ունէինք ախոյեան...

*) Շահ-Աբաս տպագրուած է 1895 թ. Տարազում:

Մեր այս խաս գիւղն այն ժամանակ մի փոքր քաղաք էր, նրա մէջ ապրում էին Հարուստ Հողագործները և կրտսեր իշխանները կամ Սեպուհներ. այն ժամանակ ծաղկած էր մեր գիւղացի Ս. Մեսրոպը, տաճ էր Հայ-մարդուն Հայ-գիր...

Մեր գիւղումն ապրում էր մի շատ Հարուստ Հողագործ, Թօրիկ անունով, նա ունէր եօթը որդի. երկու մեծերը ծառայում էին երկրի իշխանին, չորսն Հողագործութեամբ պարապում, իսկ ամենից փոքրը, ճարտար Վրթնէն՝ փողոցներն իրար էր անցնում, աղջիկների տիկիններր խլում, մանուկներին ծեծում, պառաւներին բարկացնում, կռիւ ու խայտառակութիւններ սարքում:

Նա խիստ անհանգարտ, չարաճճի, Հպարտ, սրամիտ, բայց ոչ անգութ, անաչառ տղայ էր. մանկութեան ատեն իսկ տեսնւում էր նրա մէջ ազնուութիւն, եռանդ, խոր ընկերասիրութիւն և զգւանք դէպի գծուծ գործեր:

Մեր պատմած ժամանակ՝ նա տասն և մէկ տարեկան էր. առաւօտ դուրս կըգար փողոց, խեղկատակութիւն, պառաւներին ծաղրել նրա սովորական զբաղմունքն էին, որովհետև միայն կիրակի օրերը տեսնում էր իր հասակակից ընկերներին, նրանց Հետ խաղում, բայց՝ ուրիշ օրեր ո՞ւր էին դնում նրանք, այդ Վրթնէն չըգիտէր:

Վրթնէն ուսել էր ձանձրանալ, դժկամակել անգործութեան դէմ, այդ իսկ պատճառաւ չըգիտէր ինչպէս ձանձրոյթը փարատել.

—Սիրտս տրաքւում է,—ասում էր նա—ինչ անեմ, խաղ չըկայ, ընկեր չըկայ, պառաւներին բարկացնել, անէծք ու հայհոյանք թափել տալ, ո՛չ, լաւ բան չէ, աղջիկներին լացացնել, տիկիններր խլել... ո՛չ... մեղք է իրանից տկարին լացը տեսնել... գործել պէտք է, բայց ինձ ո՞վ է բանի տեղ դնում:

Փողոցի Հարազատ որդին, անհոգ ծնողներից ազատազրւած ստամբակը մի շաբաթ անցկացրեց այսպէս մտմտուքով:

—Է՛հ, մի բան անելու է,—եզրակացուց նա,—անգործ

մարդի տեղը գերեզմանն է, անգործ մնալ նշանակում է մեռնել, ոչ, ես այդ չեմ անիլ և կըթողնեմ պառաւների օձիքը։

II

Ա՛ի կիւրակէ երեկոյ՝ գիւղի մանուկներից շատեր հաւաքուած մի անկիւն, մտիկ տալով արծաթափայլ լուսնին, անամպ երկնակամարին, խօսում էին իրար հետ։ Խաղերը տեղի էին տւել մանուկ տրամաբանութեան, իրար հարցեր էին առաջարկում։

—Ա՛... որչափ սիրուն է լուսինը,—ասաց մի մանուկ,—կարծես մեր իշխանի զարդարուն արծաթէ վահանը լինի... տեսնես ինչ նիւթ է և ինչ է դա...

—Անշուշտ արծաթ է...

—Աւելի կաթնէ լիճ է քան արծաթ...

—Տատս ասում է,—մէջ մտաւ Վրթնէ,—թէ արևն ու լուսինը քոյր ու եղբայր են, բայց՝ ոչ անզօր մարդիկ... Արևն ստեղծել է Մշու դաշտը և Սասնոյ սարերը, լուսինն էլ վարարում է Եփրատը։

—Չա՛, հա՛, հա՛,—ծիծաղեցին մի քանի մանուկներ։

—Չա՛, հա՛, հա՛,—արձագանքեց մի ուրիշը...

—Ինչո՞ւ ես ծիծաղում,—Արամ,—վիրաւորուած հարցրեց Վրթնէ վերջինից,—միթէ սուտ եմ ասում, դու մլեւնոյնը լսած չե՞ս...

—Այո՛, Վրթնէ, լսած եմ, բայց՝ սուտ, պառաւի հեքեաթ է դա։ Մեր վարդապետն ուրիշ բան է ասում այդ մասին, դու եթէ լսած լինէիր նրան, այդպէս չէիր ասիլ։ Արևն ու լուսինն Աստուծոյ ստեղծածներ են, նոյնպէս և աշխարհը նրա ձեռագործ է...

Այս ասելուց յետոյ՝ վեր կացաւ Արամ, զրպանից մի կտոր ածուխ հանեց և ժպտելով սկսեց պատի վրայ ոլոր մոլոր գծեր գծել։ Մանուկներն հետզհետէ ցրւում էին, միայն Վրթնէն անշարժ կանգնած նայում էր...

Երբ գործը վերջացրեց Արամը, Վրթնէ նրա թևից բռնելով հարցրեց.

—Դու այդ ինչ գծեցիր...

—Ես գրեցի, տխմար, ոչ թէ գծեցի։ Սրանք գրեր են, սրանք խօսում են ճանաչողի հետ և կըպատմեն իրանց կարդալ իմացողին թէ «Վրթնէն յիմար է, Վրթնէն usամբակ է»...

—Չէյ,—գոչեց մանուկն ամօթահար և. բարկութիւնից դունատած.—այդ ինչ ես ասում, այդ սև գծերն անարգում են ինձ...

—Այո՛։

—Լա՛... բայց՝ դու Արամ, քեզպէս եռակի յիմարն ինչպէս սովրեց գծել գրեր, ինչպէս դու ես ասում, որ անարգում են ինձ...

—Ուսումնարանից հարցրու...

—Ուսումնարա՞ն... դա ինչ բան է, ուտելիք է, ինչ է...

—Տխմար դու, ուսումնարանն ուտելիք չէ, եկեղեցւոյ մօտի տունն է։

—Ա՛հ։ Լաւ. բայց՝ ինչպէս սովորեցար այդպիսի հրաշալի բան... գիծը խօսում է, կասես՝ իմացողին հետ... քեզ ո՞վ սովրացրեց...

—Մենք ուսումնարան ենք գնում. այնտեղ գալիս է Յովսէփ վարդապետը, սովրեցնում է։ Մեր ընկերների մէջ, միայն դու ես, փողոցական ստամբակ, որ չես ճանաչում այդ գծերը, և քեզ հետ չեն խօսում։

Վրթնէ մի րոպէ լռեց, ապա իր անելիքը որոշած մարդու պէս հարցրեց.

—Ո՞ր ժամանակ և ե՞րբ էք գնում սովորելու։

—Միայն կիւրակէ և տօն օրերն ազատ ենք, միւս օրերըն առաւօտից մինչև երեկոյ այնտեղ ենք լինում։

Արամն այս ասելով հեռացաւ։ Վրթնէ ձեռները խաչաձև կրծքին դարսած, յուզած, ակնապիշ գրերին էր նայում, կարծես այդ անկանոն գծերն ասում, քարոզում էին բացարձակ.

«Վրթնէն յիմար է, Վրթնէն ստամբակ է»: Մանուկն զգաց իր աչերի թրջելը:

—Օ՜—մրմռաց նա ամօթահար հեծկլտալով,—այս ապաշնորհ Արամն իմանայ մի բան և ես չիմանամ, նա ինձ անարգէ,—ինչո՞ւ վրէժխնդիր չ'եղայ,—այս գրերն անարգեն ինձ... ո՛չ, անտանելի է, ես կըսովորեմ, կապացուցանեմ՝ որ ես յիմար չեմ, իսկ այս գրերն հէնց Արամի ձեռօք պիտի ջնջվին:

III

Բացւել էր առաւօտը. մի քանի նիզակաչափ բարձրացած էր արևը, երբ Վրթնէ, ուռած աչքերով Արամենց տունը մտաւ: Նա տակաւին քնած էր, չէր լսում մօրը ձայնը, որ խնդրում, աղաչում, ապա հայհոյում էր, բայց նա վեր կենալ չէր ուզում:

—Դու, նանէ, ասաց Վրթնէն ծոյլի մօրը,— մի կողմ կաց, ես կրզարթնեցնեմ. մօտեցաւ նրան, ցնցեց ուժգնապէս ասելով,—վեր կաց, Արամ, վեր կաց... ողջ գիշերը ես անքուն եմ մնացել դպրոցի սիրոյն, իսկ դու անհոգ ես և խեղճ մօրդ նեղացնում ես: Վեր կաց դնանք, ես պիտի հաստատեմ յիմար չըլինելս... ես պիտի սովորեմ:

Արամ՝ փնթփնթալով, գրեթէ լալով վեր կացաւ, հագիւ կէս ժամում հագնուեցաւ, մօր ստիպումով սառը ջրով լւացուեցաւ, ապա կաթն ու սեր կերաւ և այնպէս ճանապարհ ելաւ:

Մի ընդարձակ դահլիճ էր այն, ուր կարգաւ նստած էին զանազան հասակի մանուկներ, իսկ սենեակի վերին անկիւնում, աթոռի վրայ, հոնի ճիպոտը ձեռին, բազմած էր երիտասարդ աբեղան:

Ներս մտնելներին պէս, Արամ խոնարհութիւն արաւ ուսուցչին և երկիւղած դէմքով անցաւ իր տեղը նստեց: Վրթնէ շշմորած, ապշած, մի տեսակ կեղծ ժպտով շուրջը նայեց. այնտեղ էին իր բոլոր փողոցական ընկերները, նստոտած լուռ ու մունջ, ձեռներին բռնած էին մագաղաթի գալարուն տերևներ,

ոմանք էլ հաստ գրքեր, մի քանին վարդապետի առաջ ծրնրադրած դաս էլին ասում:

Մի րոպէ պատանին սառած մնաց:

—Այս բոլորն այստեղ են,—մտածում էր նա,—իրաւ որ մինակ չլմարն ես եմ եղել... բոլոր՞ը, բոլորը սովորում են... ես եմ եղել խեղճ պառաւներին, աղջիկների հոգեհանը... Օ՜, ափսոս իմ կորցրած անգին ժամանակ...

Վարդապետը նկատեց նրան, որ մէջտեղում կանգնած ինչ անելը չէր իմանում, ոտքի ելաւ, քաղցրութեամբ մանկան մօտենալով՝

—Ո՞ւմ որդին ես,—հարցրեց:

—Հասօենց Թօրիկի...

—Լա՛ւ, ինչո՞ւ ես եկել, ինչ ես ուզում...

Խոլոյն աղմուկը դադարեց, երեխաներից ոմանք գողունի ծիծաղով, ոմանք բարեկամական ժպիտով, ոմանք հետաքրքիր ուշադրութիւնները լարած սպասեցին:

—Չա՛յր սուրբ,—ասաց Վրթնէ Արամը ցոյց տալով,—դու սրան՞ սովրեցրել ես այնպիսի խազեր, գրեր եմ ասում, որ իմացողին՞ հետ խօսում են,

—Այո՛,—ժպտալով պատասխանեց վարդապետը.—Ի՞նչ է եղել:

—Գա՞ինձ նախատեց, գրեց պատին վրայ՝ «Վրթնէն լիմար, Վրթնէն ստամբակ է»:

—Չա՛ւ, լա՛ւ,—ձեռը նրա գլխին դնելով,—հիմա ինձ մօտ գանգատելո՞ւ երկար, պատժո՛ւմ նրան, որ միւս անգամ չանի...

—Ո՛չ,—միջամտեց Վրթնէ աշխուժով և ուսուցչի ձեռն իր շրթունքին մօտեցնելով,—ես եկել եմ, խնդրում եմ, որ ինձ էլ սովրեցնես միևնոյն բանը. ոչ թէ Արամին պատիժ եմ ուզում... ոչ, ոչ: Ես ուզում եմ ցոյց տալ գործով իմ բոլոր ընկերներին, որ ես յիմար չեմ, ես ստամբակ չեմ, էլ չըպիտի կոտորեմ պառաւների կճուճներում ժողոված ձւանները, չըպիտի խրտեցնեմ նրանց թռուխս ընկած հաւերը, չըպիտի լա-

ցացնեմ մատաղ աղջիկներին, այլ՝ պիտի սովորեմ այն՝ ինչ որ սովորած է ծոյլ Արամը, որ չի ամաչում մինչև կէս օր քնել, որին ես բռնի վեր եմ կացրել, քաշ տւել մինչև այստեղ...

—Ա՛հ, դու պատւական փոքրիկ, դու չիմար չես,—լուրջ կերպով պատասխանեց ուսուցիչ աբեղան,—քո փոքր գլխիդ մէջ, մեծ իմացականութիւն, այս սիրուն աչքերիդ մէջ ահագին հասողութիւն, մատաղ կրծքիդ տակ մի հզօր առիւծ է ննջած... Եկ, որդեակ, Ես նստիր հէնց իմ աթոռի առաջ, ամփոփ ուշադրութեամբ լսիր և մտիդ պահիր ասածներս: Այդ Արամը, որ քո պատւի զգացումըն է զրգռել, մեր ամենածոյլ, ամենաչետին աշակերտն է:

—Օ՜, Հայր սուրբ, ես շուտով նրան պիտի ամաչեցնեմ, պիտի Հաստատեմ իսկապէս ինչ լինելս...

—Դու մեծ մարդ կըլինես՝ սիրելի մանուկ:

Արամն ամօթից կարմրեցաւ, աչքերը խոնարհեց, Վրթնէի վէս ու յաղթական հայեացքն ընկճեց նրան: Նա իսկոյն բազմեցաւ վարժապետի ցոյց տւած տեղը...

ՍԷՒԱՆ

(Կըշարունակուի)



ԵՓԼ ՅՈՂ ՄԸ ԸԼԼԱՄ ԵՍ…

(Մանկապարտեզի երգ, անգլիերեն)

Երբ գիս աւելլայ
Մի չող ըլլի Հայր Աստուած,
Կրփլտրեմ մի չուշայ
Շուք տեղ մոռցլած.
Ալոր ծոցի քլքուշիկ
Հոսեմ լոյս չլորհաց,
Որ վերցնի մեղուշիկ
Գլուխը խոնարհած:
Երբ ես ըլլամ չող,
Իսկոյն կ'երթամ մութ եւ ցած
Տուներու մէջ մալող
Անթիւ պչուռաց.
Կրփայլեմ միչեւ որ
Յամքին արտասուք,
Եւ տուներն արգաւոր
Հետու երթայ սուգ:

Ց. Թ. ԴՈՅԵԱՆԱՆ

ԹՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐԴՈՒՄ

(Ռուսիա)

Թննդեան Տօնը մօտենում է։ Նիւշատելի բնակիչների մէջ մի անսովոր շարժում է։ Այս քաղաքը, որ միշտ աչքի է ընկնում իր հանդարտ ու խաղաղ կեանքով, ահա քանի օր է ինչ աղմուկ է բարձրացրել։—Տղամարդիկ, կանայք գնում-գալիս են, առնում-ծախում են։ Վաճառատները ի ցոյց են դրել դանազան անթիւ իրեր Տօնի առթիւ տրուող նուէրների համար։ Խանութները լիքն են մարդկանցով, որոնք ընծաներ են գնում իրանց ծնողների, եղբայրների, քոյրերի համար. որը ալբոմ է ընտրում, որը մատանի, որը—ապարանջան։ Երեխաները խումբ խումբ հաւաքւում են քաղաքի գլխաւոր փողոցը, իրանց ապագայ զարմանալիքները, նայելու ինչպէս են բանուորները պատրաստում ճոճանոցները, կապում փայտէ փոքրիկ ձիերը —ձիախաղի (carrousel) համար։ Այն փոքրիկները, որոնք ցրտի պատճառով չեն կարողանում դուրս գալ փայտէ սիրուն ձիերին նայելու—մի առանձին զարմանքով պատմում են մի մեծ Madame de Noël-ի մասին (Ծննդեան տիկինը կամ պառաւ տատիկը), որին անհամբեր սպասում են, կամ անդադար հարցնում են իրանց մայրերին՝ երբ պէտք է գայ, վերջապէս, երեխաների սիրած Madame de Noële-ը, երկնային հրեշտակը,

իր սպիտակ հանդերձում և իրանց կարկանդակները կրբաժանէ։ Փողոցներում՝ այստեղ-այնտեղ, տղամարդիկ, կանայք մի-մի եղևլին շալակացած՝ գնում են դէպի իրանց տները։ Այս էլ տօնավաճառի համար։

Ծննդեան տօնից դեռ մի քանի շաբաթ առաջ քաղաքի կիրակնօրեայ դպրոցների վարչութիւնը տպադրել էր տւել փոքրիկ թերթիկների վրայ Տօնի առթիւ յօրինած երգերը և բաժանել քաղաքի բոլոր երկսեռ երեխաներին։ Վերջիններս իրանց ուսուցիչների, վարժուհիների կամ ուրիշ ձեռնհաս անձանց աջակցութեամբ սովորել են այս երգերը։ Շատ մայրեր իրանց 3—4 տարեկան երեխաներին, որոնք կարդալ չգիտեն, բերանացի սովորեցրել են այս երգերը եկեղեցում երգելու համար։ Մայրերը մի առանձին հրճւանքով են սպասում այն օրին, երբ իրանց 3—5 տարեկան երեխաները կրփառաբանեն Քրիստոսի Ծնունդը իրանց մանկական քնքոյշ ձայնով։ Այո, մի ինչ որ շարժում կայ։ Մի ինչ որ կախարդական ոյժ, թարմ հոսանք է մտել ժողովրդի մէջ։ Բոլորի երեսին ուրախութեան նշոյլներ են նկատւում։ Բոլորը մի առ ժամանակ մոռացել են իրանց առօրեայ պարապմունքները, օրւայ հոգսերը՝ հարուստը իր հաշիւները, աղքատը իր թշւառ դրութիւնը։ Բոլորը պատրաստւում են, որքան կարելի է, շքեղ կերպով տօնել նւիրական օրը, երբ Հրէաստանի մի անկիւնում, մի խուլ քարանձաւում, Ծնւեց Մեծ Մարդը, կոյրերի, աղքատների, թշւառներին բարեկամը, մարդկութեան Փրկիչը, Բարերարը, այն Մեծ Ուսուցիչը, որ մարդկութեան տւեց եղբայրսիրութեան, հաւասարութեան, ճշմարտութեան մեծ դաղափարը։

Ծննդեան նախընթաց օրն է։ Այս օրը երեխաների հրապարակական տօն է։ Քաղաքիս բոլոր մանուկները (3—12 տ.) պէտք է միասին տօնեն այս օրը եկեղեցում։ Երեխաները անհամբեր սպասում են զանգակների հնչելուն։ Երեկոյեան ժամը 4-ից «Ազգային» կոչւող եկեղեցու զանգակները սկսում են հնչել։ Երեխաները իրանց վարժուհիների,

ուսուցիչների հետ խումբ-խումբ եկեղեցի են գնում: Եկեղեցու ներքին յարկը այս երեկոյ յատկացրել են միմիայն մանուկներին: Երեխաները հանդարտ, առանց աղմուկ հանելու, նստում են նստարանների վրայ: Իւրաքանչիւր խմբի առաջնորդող բաժանում է իր խմբին փոքրիկ թերթիկները, որտեղ տպագրուած են տօնական երգերը: Եկեղեցու մէջ տեղը կանգնեցրած է մի ահագին տօնածառ, որի գագաթը հասնում է մինչև առաստաղը:—Տօնածառի ճիւղերի վրայ կարգով պնդացրած են անթիւ մոմեր, որոնք միմեանց հետ միացրած են թելերով հեշտութեամբ վառելու համար:—Ծառի մօտ դրած է մի ահագին սեղան, որի վրայ դրած են մանուկների սիրելի կարկանդակները:—Այդ սեղանի մօտ կանգնած է մի ուրիշը, որտեղ կարգով դարսած են «Fésus t'aime!» (Յիսուսը ֆեզ սիրում է) խորագրով գրքոյկի օրինակները:

Ներքին յարկը արդէն լցւել է երկսեռ մանուկներով: Վերևում նոյնպէս ասեղ գցելու տեղ չկայ: Ի՞նչպիսի հաճոյքով են նայում վերևից մանուկների վրայ: Մայրերը իրանց երեխաների փոխարէն արդէն ստանում են հոգեկան բաւականութիւն:—Ձեր երեխան էլ է՛ այնտեղ, տիկին,—լսւում է վերին յարկում:—Այո՛ տիկին, այնտեղ է,—պատասխանում է մայրը ուրախութեամբ:

—Իսկ ձե՞րը:—Նա էլ այնտեղ է:—Աստուած իմ, որքա՜ն պիտի ուրախանայ փոքրիկս—լսւում է մի այլ տեղ:

Մանուկները աչքերը յառել են տօնածառի վրայ և անհամբեր սպասում են: Խփում է ժամը 5-ը: Ահա մէկը մօտեցաւ տօնածառին, մանուկների սիրելի ծառին, և մի ակնթարթում կախարդական ծառը վառւեց ներքևից մինչև վերև: Երեխաների աչքերը փայլում են ուրախութիւնից. գոռում, գոչում են երեխաները հազարաւոր մոմերի լոյսի տակ, ցատկում են տեղերից, միմեանց յայտնում իրանց տպաւորութիւնները:

Ահա պաստօներից մէկը բարձրանում է ամբիոն: Սա պ. Րոբերտն է: Նիւշատելի սիրելի ու յարգելի պաստօներից

մէկը, ժուժկալութեան ընկերութեան (Société de tempérance) գլխաւոր գործիչը, հայ բռւառներին օգնող տեղական կոմիտէյի գլխաւորներից մէկը։

—Լռութիւն, կոչում է յարգելի պաստօրը, և մի ակնթարթում դերեզմանային լռութիւն է տիրում եկեղեցում։ Կարծես երկու հազարից աւելի երեխաների շունչը միանգամից կտրուեց, կենդանի մարդ չըկայ, ժամացոյցների զարկը միայն անգամ կարելի է լսել։—Ահա մինչև որ աստիճանին է հասել դիսցիպլինայի զարգացումը, որքան է յարգւում կարգապահութիւնը.—4 տարեկան երեխան արդէն սնաած է դիսցիպլինայի գաղափարով. նա արդէն գիտէ յարգել հասարակական կարգապահութիւնը, նա գիտէ, երբ կարելի է խօսել, երբ լռել. որքան է նա ցանկանում հաղորդել իր տպաւորութիւնները ընկերին, բայց նա երբեմն զսպում է կարգապահութիւնը չըխախտելու համար։ Մեզ մօտ հինգ մարդու երկու խօսք հասկացնելու համար պէտք է իւրաքանչիւրի մօտ հինգ ոտիկան կանգնացնել։ Արդեօք դիսցիպլինայի խախտումը չէր, որ յայտնի յունուարի 6-ն այնքան հոգի զոհ տարաւ։

—Աղօթենք, շարունակում է պաստօրը։ Բոլորը ոտքի են կանգնում, և պաստօրը բարձրաձայն աղօթում է։ Երեխաները նստում են իրանց տեղերը։—Այժմ երգենք—կոչում է պաստօրը և այս երկու հազարից կազմած խումբը առանց մէկը միւսին խանգալելու, երգում է տանը պատրաստած երգերի առաջինը կտորը։—Որքան մեծ է տպաւորութիւնը։ Երգը վերջանում է։ Պաստօրը սկսում է քարոզել։—Նա պատմում է Քրիստոսի ծնունդը պարզ, հասարակ, մանուկներին մատչելի լեզուով։ Մանուկներին որոշ գաղափար տալու համար Քրիստոսի Ննդեան տեղի մասին, պաստօրը Բէթղեհէմի տեղ վերցնում է Նիւշատելը, այլի տեղ շրջակայ սառնարներից մէկը։ Երեխաները լարած ուշադրութեամբ լսում են։ Պաստօրը վերջացնում է իր գեղեցիկ պատմութիւնը, ուղղելով մի քանի հարցեր մանուկներին։—Ուրեմն ո՞ւմ համար է այս տօնը։—Քրիստոսի, գոռում

են մանուկները միասին։—Ով է Քրիստոսը։ Բոլորը միասին՝ —Մեր Փրկիչը, մարդկութեան բարերարը, աղեացներին, քրիստոնեաներին մխիթարողը։ Մանուկները երգում են երկրորդ կտորը։

Երգից յետոյ ամբիոն է բարձրանում մի ուրիշ պաստօր։ Սա մի երևոյթարդ պաստօր է (Մօրէլ). տեղական ճեմարանի (Académie) աստուածաբանական ֆակուլտէյի պրոֆէսօրներից մէկը, վերը յիշած ընկերութեան նախագահը, նոյնպէս յարգուած, նոյնպէս սիրուած ժողովրդի կողմից։—Սա նոյնպէս խօսում է պարզ լեզուով։—Սա խօսում է անձնասիրութեան (égoïsme) մասին։ Մանուկներին մի քիչ ծիծաղացնելու համար նա համեմատում է եօասէր մարդկանց բաղերի հետ։ —Մեր քաղաքային այգուբաղերը միշտ երդում են՝ quoi, quoi, quoi» (կւա, կւա...), երբ տեսնում են մարդկանց մօտենալիս։ Եօասէրը միշտ ասում է՝ «moi, moi, moi» (ես, ես կամ ինձ, ինձ)... Եօասէրը ասում է՝ ես ինձ համար, ուրիշները նոյնպէս ինձ համար. նա մտածում է միայն իր անձնական զւարճութիւնների, իր հարստութեան, շահերի մասին. նա երբէք ուրիշի մասին չէ մտածում, ուրիշի դրութիւնը չէ մտնում, աղքատի չէ օգնում, թշուառին չէ մխիթարում. նա ամեն տեղ, ամեն ժամանակ իր անձը, իր շահը աչքի առաջ ունի, ինչ հոգ, որ ուրիշները տանջւում են, մեռնում են սովից։ Յիսուսն էր այն Մեծ Մարդը (շարունակում է պաստօրը), որ մարդկութեան տւեց ընկերասիրութեան գաղափարը լայն ծաւալով, և նրա ամբողջ կեանքը այս մեծ գաղափարի իրական պատկերացումն է։ Նա մոռացաւ իր անձը, իր եսը և իր ամբողջ կեանքը նւիրից աղքատներին, կոյրերին, թշուառներին և վերջապէս նա ամբողջ մարդկութեան համար աշխատեց, չարչարւեց, և վաստակեց Փրկիչ անունը և յաւիտենական վարձքը։ Ուզում էք հետևել այս Մեծ Մարդուն։— «Այո՛», կոչում են մանուկները միաբերան։

Սրանից յետոյ մանուկները երգում են վերջին կտորը։ Ապա կարգացւում է վերջին աղօթքը։—Այնուհետև երեխաները

իրանց առաջնորդողների հետ կամաց-կամաց մօտենում են սեղանին իրանց բաժին կարկանդակը ստանալու: Սեղանի երկու ծայրին կանգնած են երկու պաստօրները, որոնք հայրական խանդով մանուկների գլուխը փայփայելով տալիս են նրանց մի-մի կարկանդակ, իսկ առաջնորդողներին մի-մի օրինակ վերը յիշած Fésus t'aime! գրքոյկներից (տան երեխաներին կարդալու համար) և մի քանի հատ կարկանդակ տանը մնացած հիւանդ մանուկների համար: Երգեհոնը հնչում է: Մանուկները իրանց կարկանդակները կծոտելով ուրախ-ուրախ դուրս են գալիս եկեղեցուց: Այժմ նրանք գնում են քաղաքի գլխաւոր հրապարակը «carrousel» խաղալու, որին անհամբեր սպասում էին: Խաղերից յետոյ նրանք գնում են տները իրանց ընտանեկան տօնածառերը վառելու հասարակական տօնածառից յետոյ և զարճալու մինչև ուշ գիշերը:

Ծննդեան օրն է:

Ժամը 2-ն է (կէս օրից յետոյ): Ագռաւին եկեղեցու դանգակները հնչում են: Այժմ մեծերի տօնն է:

Այս տօնի հետ մի յայտնի է caféchumène-երի տօնը (երիտասարդների, որոնք սովորել են հրիստոնէական կրօնը եւ հրապարակապէս ընդունում են այս կրօնը): Ցրտամարդիկ, կանայք գնում են եկեղեցի:—Վերջինս արդէն լիքըն է մարդկանցով: Պաստօրները ներկայ են և պատրաստ, սակայն դեռ չեն սկսում ժամը: Բոլորը նայում են դէպի հիւսիսային դուռը: Ահա վերջապէս դուռը բացւեց, և 60-ի չափ մատաղահաս օրիորդները զոյգ-զոյգ մտնում են եկեղեցի: Նրանք հագած ունին սև շոր, իսկ գլուխները ծածկել են սպիտակ շղարշով: Օրիորդները կանգնում են եկեղեցու մէջ տեղը, պաստօրական ամբիոնի հանդէպ: Ո՞վքեր են սրանք: Նիւշատելի բողոքական օրիորդներն են, որոնք այս տարի բոլորում են Ծննդեան 16-դ տարին, որոնք բողոքական կրօնի սահանջմամբ պէտք է հրապարակօրէն կրկնեն Մկրտութեան ձէրը: Սրանք, ինչպէս ասում են, արդէն հաճախում են իրանց, կա-

Սրբուց պահպանց գեղարվեստական

ըող են դանազանել բարին-չարից, լաւը վատից, սրանք արդէն գիտեն՝ ինչ է կրօնը, նրա օրէնքները, պահանջները և այլն. սրանք Համոզուած, առանց կողմնակի ճնշման, ազատ համարձակ, հրապարակապէս յայտնում են իրանց ծնողների կրօնը և պատրաստ են նրան հետևել մինչև իրանց մահը:

Իւրաքանչիւր տարի Ծննդեան տօնին 16 տարեկան երկսեռ երիտասարդներ գալիս են եկեղեցի, երկրորդ անգամ ընդունելու Մկրտութիւնը: Ծննդեան տօնից դեռ երկու ամիս առաջ սրանք գնում են քաղաքի կողմից նշանակած պաստօրի մօտ, սովորելու կամ կրկնելու կրօնի գլխաւոր սկզբունքները և և ս. գիրքը: Երկու ամսից յետոյ սրանք կրօնի քննութիւն են տալիս պաստօրներից կազմած մի փոքրիկ մասնաժողովում: Այնուհետև սրանք իրաւունք ունին գնալ եկեղեցի վերընդունելու կրօնի կամ աւելի հեշտ՝ վերահաստատելու: Այս ծէսը կոչւում է Ratification (վաւերացում կամ դաշնագրութիւն):

Այս անգամ պաստօրը ուղղում է իր քարոզը յատկապէս օրիորդներին: Նա պատմում է Քրիստոսի կեանքը, նրա գաղափարը, կրօնի գլխաւոր սկզբունքները: Քարոզից յետոյ մի փոքրիկ կրօնական քննութիւն է տեղի ունենում կամ աւելի ճիշտը օրիորդները հրապարակօրէն կրկնում են այն, ինչ որ մկրտութեան ժամանակ երաշխաւորն է ասել նրանց փոխարէն: Այսուհետև պաստօրը առաջարկում է օրիորդներին մի շարք կրօնական հարցեր, որոնց օրիորդները հերթով պատասխանում են: Ժամը վերջանում է մի աղօթքով, և ժողովուրդը ցրւում է: Ժամը 5-ին (երեկոյեան, նոյն օրը) եկեղեցու, դասակները նորից ղօղանջում են:

Այժմ պատանիների (աշակերտների, աշակերտուհիների, ուսուցիչների-ուսանողուհիների) առօնն է: Եկեղեցում տօնաճառ չըկայ: Մեծերի տօնաճառով չեն հետաքրքրւում: Նոյնպէս չըկան և կարկանդակները: Եկեղեցու արևելեան մասում դաղաչին ճրագներից մի ահագին խաչ է շինած, որ իր լոյսը

տարածում է շատ հեռուն: Եկեղեցու մէջ տեղը կանգնած է մի սեղան, որի վրայ դարսած են զանազան գրքոյկներ կրօնական բովանդակութեամբ:

Պաստօրի աղօթքից յետոյ բոլորը միասին երգում են տօնական երգերի առաջին կտորը: Ապա պաստօրներից մէկը քարոզում է բնաբան վերցնելով Քրիստոսի Ծնունդը: Քարոզից յետոյ պատանիներն երգում են երկրորդ կտորը: Երկրորդ երգից յետոյ ամբիօն է բարձրանում վերը յիշած երիտասարդ պաստօր—Մօրէլը:

Վերջինս կրօնական ոչ մի հարց կամ խնդիր չէ շօշափում:

Նա սկսում է կարդալ իր «Marսել» (պատմութեան հերոսի անունը) խորագրով մի պատմուածքն, որ նա գրել է տօնի համար:

Այս մի զւիցերական փոքրիկ հովիւի (12 տար.) գեղեցիկ պատմուածքն է: Այստեղ հեղինակը նկարագրում է փոքրիկ երեխայի երջանիկ մանկութիւնը Պարիզում բախտ որոնելու համար. նրա ողորմելի, թշուառ դրութիւնը այնտեղ և այլն: Հանդիսականները երգում են վերջին երգը, կարդացւում է վերջին աղօթքը:

Երգեհոնը հնչում է: Հանդիսականները մէկ-մէկ մօտենում են սեղանին, պաստօրներից մի-մի գիրք ստանում նրանց հայրական գգւանքի հետ:

Ժողովուրդը ցրւում է ուրախ ու գոհ՝ տանելով իր հետ մի անջնջելի ջերմ յիշատակ այս մեծ տօնի մասին:

Ց. Ճ. Բազրաճեան

Նիւշատել (Զւիցերիա)

ԿՈՒՐՔ

(Երեւելեան զրոյց)

I

ին հին դարերում, արեւելքի կողմ
Բահրլ քաղաքում ապրում էր մի անձ,
Նահապետ, իշխան, չգիտեմ թագաւոր,
Թէ մի շահրնշահ, կարճ խօսքով ասած,
Անզուլթ բռնակալ անսահման իշխան:
Նա իր սրովն էր նւաճել համայն
Արիքն, Անարքն—ծովից ծով աշխարհն
Երկրպագում էր, խոնարհում նրան.
Դողդոջիւն մարմնով իշխան, թագաւոր,
Ամբոխի միջից քաջ, թէ դորճաւոր
Բոլորն ակամայ ծառայում էին
Անիտարաբար այդ գոռոզ իշխանին:
Ահեղ անունը, անողորմ հռչակն
Սփռել էր երկրի ամեն կողմն արձակ
Սոսկում ու սարսափ, վայնասուն կրակ:
Ամեն մի հոգու աշխարհիս կարճ կեանք,
Անզուլթ իշխանի վարքի պատճառով,
Դարձել էր միայն անվերջ, ժանտ տանջանք:
Ամեն մի մեծ անձն, թէ մահկանացու,
Կին թէ տղամարդ, տէր թէ տիրացու,
Անգէտ թէ գիտուն, հովիւ, այգեպան,
Ծեր թէ մատաղահաս, մշակ թէ անբան,

Ջինուր, թէ ասպետ և մինչև անգամ
Աշխարհից քաշած դէրվիշ ու ֆաքիր
Նրա նախանձոտ աչքից հեռացած,
Պառնալի սրտով աչքերը խփած,
Ականջներում բուրդ, բամբակ խրած,
Այդ բռնակալի վրէժխնդրութիւնից
Լքւած, սարսափած ու ապուշ կտրած,
Հառաչանքներով սպասում էին
Պաժանի մահւան, անարգ վախճանին:

II

Այդ բռնակալը թողնել այս աշխարհ
Չէր էլ մտածում... այլ ընդհակառակ
Մարմարի քարից քանդակել տւած
Ապրանքներում, դրախտին յարմար
Եղեմանման և մշտադալար
Քաղցրաբոյր ու զով մեծ պարտէզներում,
Կեղծաւորներով միշտ շրջապատւած,
Ձողաքորթներով շփւած, խնկարկւած,
Կոյր աշուղների, շիլ դուսանների
Երգին ու տաղին մեկ նիւթ դարձած.
Մեծ կանանոցի անթիւ, անհամար
Հրեշտակատիպ, դեհհաս ու մատաղ
Սգադէմ, դժգոյն, անտէր ու թշւառ
Հարճ-աղջիկներից շոյւած, քայքայւած.
Կուրծքն ու պարանոց, թիկունքն ու ուսնոց
Անգին զոհարով զուգած, զարդարած,
Դրախտի հաւերով, սոխակի լեզւով,
Վճիտ ջրերում ազատ, խայտացող
Կարմրախայտերով, հարաւում հասած
Քաղցրաբոյր բերքով սնւած, պարարւած.
Նրան գինիով, նեկտարով անմահ

Ծարաւն ու սպսպակն բաւականացրած.
Անթիւ զանձերով, գոհար պատւական,
Բիւր ստրուկներով կարծում էր իրան
Անծայր ու անվերջ արարոց աշխարհն
Մի մեծ գահ արած, բարձրացած վրան,
Մարդկային ազգը՝ ըստրկացրած,
Նրանցից պաշտած, ինչպէս մի Աստուած։

Դեռ այս հերիք չէր, մտածում էր նա
Յաւիտեան ապրել, ինչպէս մի անմահ...
Բայց այս մուրազը սրտումը մնաց,
Քանի որ մի օր ինքը՝ Հոգեառն
Նրա դուռն էլ բաղխեց, առանց այս ու այն՝
Հոգին վեր առաւ ու Թողեց դիակն։

III

Զըմտածեցին երկար ու բարակ
Տարան, Թաղեցին։ Ինչ առհասարակ
Սովորական է, շուտով էլ մոռացան։
Մեռելի հետ էլ նրա յիշատակ
Մոռացան յաւիտեան, խորւեց Հողի տակ։
Հօրը յաջորդեց քսան տարեկան
Մին ու ճար որդին, անունը Տիրան։

Սրա մասին էլ դառնացած խուժան
Լաւ կարծիք չունէր։ Ինչպէս էլ յուսար,
Քանի որ որդին իր Հօրն էր նման
Մարմնով, կազմւածքով դէմքն մինչև անգամ
Կարծես մի խնձոր՝ երկու մաս կիսած։

Բայց սխալւեցան։ Զանցաւ մի շաբաթ,
Տիրանն Հօր բոլոր կեղծաւոր, տխմար
Ծառայողներին դռնից դուրս արաւ։
Ձին առաւ, Հետը շքախումբ առած՝
Ման եկաւ երկիրն ծայրից մինչև ծայր։

Նա քննեց ոնձամբ իր լայնաճաւալ
ժառանգութիւնը, բազմամարդ աշխարհն.
Ինչքե՞ր նա չ'արաւ... Թշուառ չըմնաց,
Որ չըբողոքէր իր վիշտն ու իր ցաւ
Մանուկ իշխանին և չ'արժանանար
Նրա կարճ վճռի ողջամիտ, արդար:
Անխիղճ պաշտօնեայ, դող ու աւազակ
Կամ կաշառակեր. էլ մարդ չըմնաց
Գործերի գլխին, ոչ մի բռնակալ:
Խաղաղացնելով այսպէս նա աշխարհ,
Քաղցին կշտացրած, մերկին հագցրած,
Վերադարձրած դրկւածի կայքն,
Տկարի աչքի արտասուքը սրբած՝
Նա վերադարձաւ իր մայրաքաղաք
Ամենից սիրւած, ամենից պաշտւած:
Եւ ժողովուրդը անւանեց նրան
Խորին Համոզմամբ «բարեպար իշխան»:

IV՝

Ուեծ հանդէսներով դիմաւորեցին
Հպատակները իրանց իշխանին.
Նրա անցնելիք վողոցներն բոլոր
Գոյքով, դիպակով լաւ զարդարեցին:
Կանայք թէ մարդիկ երգով քաղցրաձայն
Թնդացրին օդն և մինչև անգամ
Գոյնգոյն զարդարւած, բոլորած թաւիղ
Պարերով, եայլով մինչ պալատ մտան:
Տիրանը զգացւած, ողևորութեամբ
Ընդունեց նրանց, մինչև գիշեր
Պատւեց, կշտացրեց, դրեց ճանապարհ:
Եւ երբ բերկրալի երանութեան մէջ,
Գուշակումներին չըկար ծայր ու վերջ.

Ուրախութիւնից չէր կարում քնել,
Յանկարծ ներս մտաւ պատանքաճ մի մարդ...
Նոյն ակնթարթում ճանաչեց իշխան
Իր խոժոռադէմ հօր ժանտ ուրուական:
Վախեց, դողդողաց, պապանձւեց Տիրան.
Ձրթիներն էլ կամքին չըհնազանդեցան,
Կարծես թէ գամւեց, տեղից տեղ մնաց,
Ուրուականն ահեղ, ուղղաձիգ կանգնած,
Մազերը ցցւած, ունքերը կիտած,
Արիւնով լցւած աչքերն բոցավառ,
Կայծեր էր թափում դէմքիցը մռայլ:
Անվերջ շարժելով մերկ թեւն ու գլուխ,
Խրոխտագին ձայնով որոտ, մուր ու թուք
Բերնից շաղ տալով, գոռաց զայրագին.
—«Անարժան զաւակ, ստոր, ցած հոգի,
Որ թաւալւեցար հողում ու մոխրում,
Օրերդ անցկացրիր նեխւած ամբոխում:
Որ յանդգնեցար խուժանին անարգ
Տղմից ու ճահճից բերել իմ պալատ,
Ապականեցրեր տոհմական սուրբ յարկ,
Հանգստարանում յուզեցիր դիակս
Ու ստիպեցիր մոլեգնած դուրս գալ
Ու քեզ անիծել... Ցնորւած զաւակ,
Դու նսեմացրիր փառքըս անաղարտ,
Ապականեցիր քեզ տւածս աւանդ:
Դեռ էլի յամառ կամքդ փոխել չես,
Մինչ երբ, քանի մէկ դու հոգիս տանջես...
—«Ափսոս, որ դու ինձ, հայր, հասկանում չես»...
Ասաց Տիրանը, երբ որ ուրուականն
Քայլերը ուղղեց դէպ հանգստարան:

GAILLARD, BERLIN.

Գիւղական տեսարաններ

V

Հօրն այս վարմունքը դեռահաս իշխանի
Վիշտը սաստկացուց. բայց նպատակից
Շըշեղուեց երբէք: Այլ ընդհակառակ
Էլ մեծ եռանդով նա գործի կպաւ:
Աշխարհին տիրած մարդկանց իրար դէմ
Ջինող, կռւեցնող ցեղ ու դասակարգ,
Խօսք ու ձայն խեղդող, կաշկանդող կեանք, կամք
Խիղճ բռնաբարող հին օրէնք ու կարգ
Հիմնովին փոխեց: Իր հովանու տակ
Երկրին մէջ ապրող մտքով մշակւած
Ամեն մի գիտուն, թէ արհեստաւոր
Ստեղծագործածն ազատ համարձակ
Ցրւում, տարածում էր համայն աշխարհ:
Փողովրդի բեռն, հարկերն պետական
Նա թեթեւացրեց, թողեց չնչին բան,
Նւէր ու բաժին, պարտիք կամ բէկեար,
Անվարձ աշխատանք աղայի դրան
Խստիւ արգելեց, ջընջըւեց իսպառ:
Բիւր ստրուկների, որոնց դերած էր
Պատերազմներում իր հանդուգնալ հայրն
Ու կանանոցի հարճերին թշւառ,
Որոնց ժողւել էր հայրը բռնակալ,
Ազատ արձակեց: Այսպէս ամեն մարդ
Կարող էր յայտնել իր բողոքն անձամբ
Տիրան իշխանին, որի խիստ վճիռ
Պատժի էր մատնում անողորմաբար
Յանցաւորներին, սփոփում անճարն:
Երկրի կենդրոնից, ինչպէս իր սրտից
Դէպ իր անդամներն, եօթ տարի ամբողջ

Որպէս հոկող դէտ անընդհատ, անխոնջ
Այնպէս աչալուրջ և այնպէս սրթիռն
Կառավարեց, որ բոլոր աշխարհում
Ոչ ոք իր սեւ օրն չ'ողբաց, չլսգայ.
Ոչ ոք ձեռքերը ծոցում մոլորած
Շրթափառեցաւ, դռնից դուռ մուրաց:

VI

Եւ ժողովուրդը բախտի մէջ գնդաւած,
Անցանիից ժողվեց, բիւր դարձաւ ցանածն.
Տնկեց, աճեցուց, շինեց ու շէնցաւ,
Ուրախութեան մէջ երգեց, բերկրեցաւ:
Նա ցնծութեան մէջ չըմոռացաւ իշխանին,
Որ առանց վարձի բուժեց իր խոր խոցն
Ու երդերի մէջ, իր սրտից բղխած,
Նրան բարձրացրեց մինչ երկինքն անհուն,
Առաջը չոքած երկիր էր պագում,
Երգում սրտագին, կանչում անդադար,
Եւ անւանում էր. «Ողորմած, արդար,
Ի'սկ անշահասէր, մարդասէր արքայ»:
Խաղաղութիւնն անվերջ կորցրած,
Մի գիշեր դարձեալ դամբանից ելաւ,
Նոյն կերպարանքով նոյնպէս բորբոքած,
Եկաւ, մտաւ Հայրն իր որդու սենեակ,
Եւ դարձեալ դոռաց.—«Ո՞ւր է, ո՞ւր իմ փառքս,
Ո՞ւր են տարուկներս, ո՞ւր է կանանոցս,
Ո՞ւր շպրտեցի՞ր արքայական թագս,
Փոքրոգի, տրո՛ւկ, անիծեալ զաւակ...
Ո՛չ, երբէք, դու չես, չես դու իմ զաւակ,
Շունիս դիւցական արիւն անարատ,
Շունիս, ո՛չ վեհ սիրտ, ոչ ոգի անմահ,
Վեր չի ձգում քեզ վսեմ դաղափար,

Ճահճում ու աղբում փնտրում ես գոհար...
Դու իմ արնից չես, գլորվիր գահիցս,
Ընկիր, կործանվիր, հերիք տանջես ինձ»:
—«Ափսոս, հայը, որ դեռ ճանաչում չես ինձ»...
Ասաւ ու լռեց իշխանն գլխակոր,
Բացատրութիւններն, քանի որ իր հայրն
Հեռացաւ, գնաց—չ'ուզեց իմանալ:

Աւետիս

(Վերջը միւս անգամ)

ՎՈԼՖԱՆԳ ԳԵՕԹԷ

I

Գերմանական բանաստեղծութեան համար բախտաւոր օր էր 1749 թւի օգոստոսի 28-ը. այդ օրը, ճիշտ ժամը 12-ին, լոյս աշխարհ եկաւ ապագայ բանաստեղծ Գեօթէն. մանուկը ծնելիս հազիւ շունչը վրան էր և հազիւ ուշքի բերին նրան։

Գեօթէի հայր Գասպարը հաստատ բնաւորութեան տէր, խելացի, շատ ընթերցասէր և պաշտօնով իրաւաբան էր։ Երեսնամեայ հասակում Իտալիայում արած ճանապարհորդութիւնը նրան դարձրեց ջերմ երկրպագու կլասիքական աշխարհի և գեղարեստի։ Հռովմի տեսարանական պատկերները զարդարում էին նրա բնակարանի պատերը և նրանք խորը կերպով տպաւորուեցան հանճարեղ մանուկի յիշողութեան մէջ։

Մեծ բանաստեղծի մայրը՝ Եկատերինա Եղիսաբէթն՝ էր ուրախ, աշխոյժ, բայսիրտ, բարի և վառվռուն ֆանտազիայի

տէր. սա 17 տարեկան էր, որ ամուսնացաւ Ֆաստալրի հետ, որ 40 տարեկան էր: Վոլ'ֆհանդն էր նրանց անդրանիկ զաւակը: Նրանք ուրիշ զաւակներ էլ ունեցան, որոնք սակայն վախճանուեցան, միայն կենդանի մնաց Վոլ'ֆհանգից կրտսերը՝ Կոռնելիան, որին շատ սիրում էր եղբայրը: Կոռնելիան տգեղ էր, իսկ Վոլ'ֆհանգն, ընդհակառակն, ներկայացնում էր գեղեցկութեան մի կատարելատիպը, հրաշալի, շագանակագոյն, դանդուր մազերով և խոշոր, սևորակ աչերով: Մանուկի բանաստեղծական քանքարը զարգանալուն մեծապէս նպաստեց նաև նրա մայրը, որ իր հնարած սրամիտ հէքիաթներով վառում էր երեխայի ոգևորութիւնը, իսկ հայրը մեծ եռանդով պատմում էր անտիկ աշխարհի մասին Հռոմի տեսարաններից ուրագիծ նկարները դիտող մանուկին: Նրա ծնողները բաւական կարողութեան տէր էին և Պայնի Ֆրանկֆուրտի քաղաքացիներ էին: Միջնադարեան պատմական քաղաքը իր հին շէնքերով մանուկի սիրելի զբօսատեղին էր և որոնք նրա վրայ րոմանտիքական տպաւորութիւն էին գործում: Նա կրթւում էր տանը և դպրոց էլ էր յաճախում. առանձին նէր էր ցոյց տալիս լեզուներ սովորելուն, թէպէտ քերականութիւն չէր ախորժում: Նա վազ սկսեց ընթերցանութեամբ պարապել և հօր ղեկավարութեամբ շարադրութիւններ գրել:

Մանկական խաղաղ տարիների ընթացքը խանգարուեց 1756 թուին, երբ Գեօթէն միայն եօթ տարեկան էր և երբ սկսեց եօթնամեայ պատերազմը: 1759 թուին Ֆրանսիացիները, որպէս աւստրիացիների դաշնակիցներ, մտան Ֆրանկֆուրտ, զօրքը տեղաւորուեց քաղաքացիների տներում. Գեօթէի տանը վիճակուեց բնակաւորել գնդապետ Կոմս Թորանին, որ մի խիստ կրթուած և գեղարուեստասէր մարդ էր: Նա առաջինը սովորեցրաւ փոքրիկ Վոլ'ֆհանգին նկարչութիւն և նրա մօտ սա վարժուեց Ֆրանսերէն լեզուական մէջ: Երկու տարուց յետոյ երբ անկոչ հիւրերը հեռացան, մանուկի ուսումնասիրութիւնը կանոնաւոր կերպով շարունակուեց. Հաւատար կեր-

պով ուշադրութիւն էր ընծայւած և երեխայի դեղարւեստական և ֆիզիքական դաստիարակութեան վրայ: Նա նկարում էր, նւագում էր դաշնամուրի վրայ, սովորում էր ձիավարժութիւն և այլ խաղեր:

Գեօթէի կրօնական կրթութիւնն էլ լրացած էր. նա օրինակելի քրիստոնեայ էր և աւետարանի բուն հոգով տոգորւած. դեռ 1762-ին նա գրեց մի ոտանաւոր՝ «Յիսուս Քրիստոսի յաղթանակը դժոխքի վրայ»:

Ամեն կերպ Գեօթէն զարգանում էր ջավազանց արագ. նա մանկական հասակը վերջացրաւ մի վաղահաս սիրով. ընկերների միջոցով ծանօթացաւ մի հասարակ դասի աղջկայ հետ անունը Գրեթխէն, որ մի սքանչելի շիկահեր աղջիկ էր 16 ամեայ, այսինքն երկու տարով Գեօթէից մեծ: Հասարակական խնջոյքներին, պատանին թևի տակ շրջում էր աղջկայ հետ. սա միայն մի անգամ ցոեսութեան ժամանակ հաւբաւրեց Գեօթէի ճակատը. դրանով էլ վերջացաւ նրանց սէրը, որովհետև շուտով պարզուեց, որ Գեօթէն միամտաբար խառն է եղել գող ու փչացած երիտասարդների հետ: Այս տխուր դէպքը ցնցեց նրան, նա ջղային հիւանդութիւն ստացաւ և բուժելու համար մի դիւղաղնացութիւն արաւ բնութեան ծոցում իր տանջանքները փարատելու և կազդուրւելու:

Երբէն ժամանակը հասել էր համալսարան մտնելու. Գեօթէն ցանկանում էր լեզւաբանական ֆակուլ'տէտը մտնել, նա զգում էր, որ ինքը բանաստեղծ է և լուրջ կերպով յոյս ունէր գրականական փառք վաստակելու. սակայն Հայրը անպատճառ ցանկանում էր, որ որդին մտնի իրաւաբանական ֆակուլ'տէտը. Գեօթէն չկհակառակեց հօր կամքին և 1765-ին 16-ամեայ պատանին գնաց Լէյպցիգի համալսարանը:

II

Քրաւաբանական ուսմունքները նրան չէին բաւականացնում, թէպէտ նա սկզբում կանոնաւոր կերպով յաճախում էր զանազան առարկաների լսարանները և դրում էր դասախոսութիւնները։ Նա փորձեց թողնել իրաւաբանական ֆակուլտէտը, սակայն այդ թոյլ չըտաւ պրոֆէսսոր Բեմէն, որի տանը նա սիրով ընդունուած էր։ Չհաւթափւելով համալսարանից՝ Գեօթէէն սկսեց իր հոգու համար ճարակ որոնել հասարակութեան մէջ. բայց այստեղ էլ նկատեցին, որ նրա ձևերը, շարժուածքը, խօսակցութիւնը գաւառական, անտաշ էին, հագուստի տարազը և նստուածքը շնորհալի չէին։ Գեօթէէն սկսեց իրան կոկել և իր թերութիւնները շտկել տիկինների օգնութեամբ, մանաւանդ տիկին Բեմէլի, որ մեծ ազդեցութիւն ունէր նրա վրայ իր սուր քննադատութեամբ, այնպէս որ նա սկսեց այրել իր ոտանաւորները և ձեռնամուխ եղաւ ուսումնասիրել նշանաւոր բանաստեղծներին՝ Վիրանդին, Լէքսինգին և այլն։ Այդ ժամանակ Լէյպցիգ եկաւ նրա մտերիմ Զլոսերը, որ նոյնպէս դրասէր էր և իր խրախուսական յորդորներով վերստին աշխոյժ տւաւ Գեօթէէի դրականական ձգտումներին։ Զլոսերը իջել էր Զէնկոֆի ճաշարանին կից սենեակներում. շատ ամուրի երիտասարդներ գալիս էին այդտեղ ճաշելու. Գեօթէէն էլ սկսեց յաճախել և շուտով ծանօթացաւ Զէնկոֆի Աննա-Եկատերինա դստեր հետ, որին սովորաբար Աննետ կամ Կետխէն էին անւանում։ Աղջիկն էլ անտարբեր չէր ղեպի դեղեցկադէմ երիտասարդի սիրային միտումները. սակայն իր չափազանց խանդոտութեամբ ու քմահաճութիւններով ձանձրացրաւ օրիորդին, որը բոլորովին կտրեց նրանից իր յարաբերութիւնները։ Սրտի կսկիծից Գեօթէէն սկսեց արբշիռ կենցաղ վարել, որով խանգարեց խոկ իր առողջութիւնը։ Այդ միջոցին մտերմացաւ ոմն Բերելի հետ՝ նա միջին տարիքով կրթուած մարդ էր և

ընդհանրապես լաւ ազդեցութիւն ունեցաւ Գէօթէի վրայ իր բազմակողմանի հմտութեամբ և ճաշակով: Նա զսպեց Գեօթէին և թոյլ չըտւաւ, որ իր տհաս ոտանաւորները վաղ լոյս ընծայէ: Լէյպցիգի գեղարւեստական ճեմարանի տեսուչը նրան նկարչութեան դասեր էր տալիս և պարապում էր գեղարւեստի պատմութեամբ: Գէօթէն այնքան զրաւել էր, որ գաղտնի գնաց Դրեզդէն՝ այնտեղի հռչակաւոր պատկերահանդէսը տեսնելու: Նա նմանապէս յաճախում էր թատրոն և հիացած էր Շմելինգ և Զրեդեր երգչուհիներով: Նա հրապուրած զբաղւում էր և երաժշտութեամբ. բացի դրանից նա թարգմանութիւններ էր անում և ինքնուրոյն մանր բաներ էր գրում: Երևում է, որ նա Լէյպցիգում ամեն բանով պարապում էր, և հետաքրքրւում, բացի համալսարանից: Սակայն անկանոն վարած կենցաղը այնպէս նւազեցրեց նրան, որ նա սկսեց արիւն թքել: Վերջապէս 1768 թւի օգոստոսին նա վերադարձաւ տուն՝ Ֆրանկֆուրտ, ապաքինւելու համար: Մայրը և քոյրը միշտ խնամում էին նրան, բայց առողջութիւնը դանդաղ էր վերականգնում:

Բժշկւելուց յետոյ 1770 թւի գարնանը նա գնաց Ստրասբուրգ, ուր հօր խորհրդով պիտի լրացնէր իր համալսարանական կրթութիւնը: Քաղաք ժամանելուց նա իսկոյն շտապեց հռչակաւոր մայր եկեղեցին, որը դիտելուց յետոյ բարձրացաւ նրա յայտնի բարձր զանգակատունը, որտեղից հիանալի տեսարան է բացւում քաղաքի շրջակայքի վրայ: Ուսանողական ճաշարանում նա ծանօթացաւ մի հասակաւոր ամուրի Զալմանն անունով մարդու հետ, որ լաւ մաներների և խիստ տակտի տէր էր. սա խորհուրդ տւաւ Գեօթէին իրան ատելի իրաւաբանական կուրսից շուտ ազատւելու համար վարձել մի պատրաստող ուսուցիչ, որի օգնութեամբ կարելի էր հեշտ և կարճ միջոցում ձեռք բերել նրա հօր ցանկացած դոքտորական աստիճանը. այդպէս էլ նա արաւ և գործը աջող առաջ էր գընում: Ճաշարանում նա ծանօթացաւ նմանապէս բժիշկ ուսա-

նողների հետ և դրա հետևանքն այն եղաւ, որ սկսեց բնագիտական և բժշկական դասախօսութիւնները լսել: Հասարակական կեանքից էլ յետ չէր մնում. մասնակցում էր զանազան հասարակական խաղերի, հանդէսների, սովորում էր պարեր, ծանօթութիւններ էր անում ընտիր գերդաստանների հետ, մի խօսքով, աշխատում էր ամեն կերպ իր բազմակողմանի զարգացման համար: Այդ ժամանակ Գեօթէի գրականական գործունէութեան վրայ նշանաւոր ազդեցութեան արաւ յայտնի գրող Վերդերը, որ աչքի հիւանդութեան պատճառով եկել էր Ստրասբուրգ և որի հետ շատ սեր ծանօթացաւ Գեօթէն: Երիտասարդ բանաստեղծի առաջ Վերդերը բաց արաւ նոր գրական հորիզոնները. բացատրեց Ճէքսպիրի, Հոմերոսի և Աստուածաշնչի ընդհանրական նշանակութիւնը և դրանց ամեն ազգի գրականութեան և բանաստեղծութեան մշտնջենական աղբիւր լինելը, յորդորեց հիմնաւոր կերպով ուսումնասիրել վերոյիշեալ երկու հեղինակների երկերը և Աստուածաշունչը՝ Բիբլիան: Դրա հետ միասին նոր, թարմ, ազգային ոգեշնչութիւն մտցնելու համար գրականութեան մէջ, պէտք էր ուշադրութիւն դարձնել նմանապէս ժողովրդական երգերի, զրոյցների, ոճերի և բառերի վրայ:

Այստեղ դարձեալ պէտի յիշենք մի սիրահարական էպիզօտ, որ խոր հետք թողեց պօէտի սրտում: Ստրասբուրգի արուարձաններում զբօսնելիս մի անգամ նա մտաւ Զեզենհէյմ գիւղի պաստօրի տունը. այս երեցը յայտնի էր իր բարեսրտութեամբ և հիւրասիրութեամբ: Նրա 16-ամեայ Ֆրիդերեկա դուստրը շիկահեր, կապտաչեայ, սիրուն, շնորհալի, գեղջկական պարզ հագուստով յափշտակեց միանգամայն բանաստեղծի սիրտը: Ինքը Ֆրիդերիկան էլ հրապուրուեց Վօլֆհանգով, որ ուներ բարձր, բարեկազմ հասակ, գեղեցիկ կլասիական դէմք, մեծ սևորակ աչեր՝ արտասովոր վառվռուն ցոլմունքով: Գեօթէն էլ չկարողացաւ իր ոտը կտրել այդ տնից. նա պարապմունքները վերջացնելուց իսկոյն գնում էր Ֆրիդերիկայի մօտ.

նրանք միշտ զբօսնում էին միասին, ջերմ խօսքերով ու համբոյրներով հաստատում էին իրանց սէրը: Բացակայութեան մէջ-ջոցին յաճախակի նամակագրութիւն էին ունենում միմեանց հետ: Գեօթէն Ֆրիդերիկայի համար գրեց շատ սիրալիր ստանաւորներ, որոնք արտայայտում էին մաքուր զգացում, բերկրութիւն և անմեղ պարզութիւն:

Սակայն շատ տխուր հետևանք ունեցաւ այս սիրուն սիրաբանքը: Գեօթէն հետզհետէ պաղեց իր սիրածից. թէև որ հայրն էլ երբէք չէր հանդուրժիլ, որ իր մեծ ապագայ խոստացող որդին ամուսնանայ մի աղքատ, գիւղական աղջկայ հետ: Ֆրիդերիկան նկատեց եղած փոփոխութիւնը և իր կողմից միջոցներ գործ դրաւ, որ կապերն իսպառ խզումը դէպին կատարւի. այնուհետև խեղճ աղջկայ կեանքը մի լուռ տրագեդիա էր. նա մարդու չըզգաց, թէպէտ առաջարկութիւններ եղան և մեռաւ 1813 թւին:

Վերջապէս 1771 թւին օգոստոսի 6-ին Գեօթէն կարգաց իր դիսերտացիան և ստացաւ դոքտորական աստիճան, որով մեծ ուրախութիւն պատճառեց հօրը:

III

Վերադառնալով Ֆրանկֆուրտ, Գեօթէն անձնատուր եղաւ զբօսանքների, ծանօթութիւնների և գրականական զբաղմունքների: Ստրասբուրգի մայր եկեղեցւոյ ստացած տպաւորութիւնների տակ նա գրեց մի շարադրութիւն Գերմանական ճարտարապետութեան անունով. խորամուխ եղած էր նա նմանապէս ս. գրքերի ընթերցանութեամբ, որի արդիւնքն եղաւ երկու կրօնական յօդած: Սակայն ծեր Հայրը կամենալով անպատճառ գրգուն որպէս իրաւաբան դործելիս տեսնել, ուղարկեց նրան մօտակայ Վեցլար քաղաքի դատաստանական պալատում դործնական վարժութիւնները անելու. դժկամակութեամբ նա գնաց, բայց տեսաւ, որ այս քաղաքում էլ կան բաւական կրթուած երիտասարդներ, որոնց հետ կարելի

էր ուրախ ժամանակ անցկացնել: Հաւակակից տղամարդիկների մէջ նա ծանօթացաւ ոմն կեստների հետ, որի նշանածն էր դեղանի օրիորդ Ջառլոտտան: Այս աղջիկը դերմանական կանացի այն տիպարներից էր, որոնք լինում են օրինակելի ամուսին, շրջահայեաց տնտեսուհի և արիաջան դաստիարակչուհի իր սեպհական զաւակների: Ջառլոտտան դեղահասակ, ծաղկավիթխիթ և խարտեաշ էր: Գեօթէն իր դիւրազգած բնաւորութեամբ իսկոյն ջերմ կերպով սիրահարուեց այդ աղջկայ վրայ: Ջառլոտտան իր վայելուչ սիրելութեամբ խստութեամբ պահում էր իրան պատշաճի սահմանում. սիրալիր էր նրա վերաբերմամբ նաև կեստները, որ ոչ մի խանդոտութեան նշան չէր ցոյց տալիս: Իրան տոչորող զգացումից փարատելու համար Գեօթէն ստիպուած եղաւ թողնել Վեցլարը և վերադառնալ Ֆրանկֆուրտ, որ սկսեց փաստաբանութեամբ պարապել որ մեծ ուրախութիւն պատճառեց հօրը:

Սիրային արկածները այնպէս էին ներգործել Գեօթէի վրայ, որ զեղուն զգացումներին ելք դտնելու համար գրեց **Վերթեր** անունով եղերերգական վէպիկը, որ նրա երիտասարդական գրուածներից ամենանշանաւորն է, և որ միանգամայն հռչակեց հեղինակի անունը և շուտով թարգմանուեց բոլոր եւրոպական լեզուներով: 1772—1774 թուականներին լոյս տեսան նրա և այլ մի քանի մանր աշխատութիւնները Գոլմեքէյ, Կլաւիկօ, Մահոմէտ և Գաուստի մի քանի տեսարանները. այդ ժամանակ նշանաւոր մարդիկ գալիս էին երիտասարդ բանաստեղծին այցի. հիւրերին հրճւանքով և պարծանքով ընդունում էր մայրը: Յիշենք այդ հիւրերից մի քանի յայտնիներին: 1779 թուի յունիսին եկաւ անուանի քարոզիչ և փիլիսոփայ Լաֆուտերը և ապա հռչակաւոր մանկավարժ-փիլիսոփայ Բազետովը. դրանց հետ Գեօթէն մի փոքրիկ ուղևորութիւն արաւ Ռէյնի վրայով, որ յաւերժացրաւ Գեօթէն Կօրլեցի ևաշ ոտանաւորով: Բազմազան փոփոխութիւններով լի կեանք վարելով հանդերձ Գեօթէն չէր դադա-

րում իր կրթութեամբ զբաղել. այդ միջոցին, օրինակ նա ծանօթանում էր Սպինօզայի փիլիսոփայութեան հետ: Նոյն տարւայ վերջին նրա մօտ այցի եկաւ Վէյմարի դքսի ժառանգի դաստիարակ կնեբելը, որ յայտնեց, թէ դուքսը ցանկանում է նրան տեսնել: Այս այցելութիւնը ահագին նշանակութիւն ունեցաւ Գեօթէի ապագայ ասպարիզի վրայ: Գեօթէն ուրախութեամբ օգուտ քաղեց առիթից, ճամպարտեց Ֆրանկֆուրտ և ներկայացաւ դուքսին ու իր անձնաւորութեամբ և խօսակցութեամբ այնպէս գրաւեց նրան, որ սա խօսք առաւ Գեօթէից անպատճառ գալ Մայնց, ուր շուտով գնաց և ուրախ օրեր անցկացրեց:

1775 թուին Գեօթէն ծանօթացաւ Ֆրանկֆուրտի հարուստ սեզանաւոր Զենեմանի հետ. սա մի խիստ սիրուն դուստր ունէր անհոգ մեծացած, Աննա-Եղիսաբէթ անունով, որին սովորաբար Լիլի էին կոչում. նրա հետ էլ տաքարիւն բանաստեղծը շատ մտերմացաւ, մանաւանդ որ աղջիկն էլ հրապուրուած էր գեղեցիկ և անւանի երիտասարդով: Բանն այնտեղ հասաւ, որ մի անդամ, երբ նրանք միասին նստած խօսակցում էին, մի ճարպիկ կին եկաւ նրանց ձեռները միացրեց իրար հետ՝ ասելով. «Դուք իրար համար էք ստեղծուած»: Երիտասարդները իրար վարւեցան. նշանը տրուած էր: Սակայն Գեօթէն ամուսնացողը չէր, գիտէր, որ այդ փոփոխութիւնը նրա գրական գործունէութեան ասպարիզին ձեռնտու չէ. իսկ Լիլին սովորած էր աշխարհային ունայն կեանքի և չէր կարող մի գրողի յարմար զոյգ լինել: Այս անաչող սիրարկածից ազատւելու համար Գէօթէն առանց մնաս-բարեւ ասելու Լիլիին մեկնեց Զէյցթրիա ճանապարհորդելու, ուր բաւական ցրւեց իր մտատանջութիւնները: Աշնանը վերադարձաւ Ֆրանկֆուրտ և տեսաւ, որ Լիլին էլ իրանից բաւական սառել է: Խոսքառ անջատումը դժւար չեղաւ. այդ թւականում Գեօթէի բոլոր գրւածքները լիշած սիրահարութեան զրոյմն էին կրում, օրինակ՝ «Ստելլան», «Իրուին և Էմիրա», «Պարկ Լիլի», «Էգմօնդ»:

Այդ միջոցին Ֆրանկֆուրտ եկաւ դուքս Կարլոսը և հրաւիրեց Գեօթէին գնալ իր մօտ Վէյմար: Գեօթէն այդտեղ ընդունւեց սիրով 1775 թւի նոյեմբերի 7-ին, հրաւէր ստանալուց երկու շաբաթ յետոյ:

(Կըշարունակի) **Նիկողայոս Տէր-Ասեթիբեան**



ՀԵՐՔՈՒԼԷՍ

Ի անգամ Հերքուլէսը, որի քաջութեանը ոչ ոք չէր կարող համեմատուել, երբ մտածում էր՝ արդեօք զւարճութեան թէ բարեգործութեան ձգտէ, նրան ներկայացան զուարճութիւնն ու բարեգործութիւնը:

—Եթէ դու փափագում ես հրճուել և զւարճանալ, այն ժամանակ հետևիր մարդկանց մեծամասնութեան օրինակին: Ով հետևում է ինձ, խոյս է տալիս կեանքի ամենայն ցաւերից, որովհետև ես իմ երկրպագողներին միշտ օգնութեան եմ հասնում, որպէս զի նրանք երբէք չզգան ախորժելի հանգստութիւն և քաղցր զւարճութիւն:

—«Դու ինչ դիւրակեցութիւն ես առաջարկում ինձ», դիմեց նա բարեգործութեան:

—Ես, —ասաց բարեգործութիւնը, —թոյլ չեմ տալիս ինձ պատուողներին մատնել թշուառութեան, և հրամայում եմ նրանց հետևել մեծ մարդկանց օրինակներին, որոնք գործով և խորհուրդով օգնել են իրանց հայրենակիցներին և հայրենիքին:

«Այն ժամանակ, գոչեց կարծես թէ երկնքից ներշնչուած երիտասարդը.—Ես քեզ ընտրում եմ ինձ առաջնորդ, իսկ քեզ զւարճութիւն, թող հետևեն նրանք, որոնք փափագում են միշտ զւարճանալ և հարստանալ»:

Յարգելի երիտասարդներ, հետևեցէք Հերքուլէսին և ձեր ծնողների խորհուրդներին, որոնք յաճախ յորդորում են չըխաբուել հրապուրանքներից:

Or. Ա. Ն.

ԶԻԱՐՃԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. N-ի.

1) Մի բառ գիտեմ երկվանկանի,
Ընդամենը, վեց տառ ունի,
Փորձէք կիսել դա մէջ տեղից,
Հայ գիւղացին յունիս ամսից
Շեռք կրզարնէ այդ արհեստին։
Առջի վանկից մի տառ թողէք,
Եւ այդ վանկը մի լաւ քննէք,
Կերակրում միշտ կրգտնէք։
Եթէ կուզէք շուտով գտնել,
Առաջի վանկից մի տառ թողէք,
Երկրորդ վանկից մի տառ առէք.
Հարուստներին այդպէս կասէք։
Վերջապէս ինչու ձգձըգել.
Թող կարդա, ով ինչպէս կուզէ,
Թէ ձախ՝ թէ աջ նոյն բառն է։

Առաջ. Նոյնի.

2) Մի բառ գիտեմ իննը տառից է բաղկացած։ Պարզն ասեմ, իգականի անուն է. երբ որ վերջից երեք տառ վերցնէք, տղամարդու անուն կրկարդաք, իսկ երբ կրկին երկու տառ վերցնէք, մի ծաղկի անուն է կարդացածդ։

Առաջ. Յ. Ղոլանճեանի.

3) Թափառական մենք շրջում ենք
Աշխարհիս չորս կողմերը,
Մեզի հանապազ վանում են
Սաստիկ փչող հողմերը։

Մերթ լջնում ենք երկրի վրայ,
Մերթ բարձրանում դէպ երկին,
Մերթ արտասւում՝ մերթ լացում,
Եթէ մենք չըլինենք, մարդիկ
Ինաւ չեն կարող ապրել,
Բոլոր ծաղկունք ու ծառերը
Չեն ունենալ բոյս և ծիլ։

Առաջ. ցոյցի.

4) Բառարանում մի բառ գտայ,
Երկու վանկից կըբաղկանայ.
Թէ գրերի տեղը փոփոխես,
Ուրիշ երկու բառ կըդնես,
Դու երեք բառ կունենաս,
Ասեմ քեզի թէ ինչպէս
Գտնել կըկարողանաս։—
Առաջին բառը մի բայ է
Սահմանական եղանակ,
Ունի իրան միջումը
Նա դաղտնութեան նշանակ։—
Երկրորդ բառը անուն է
Նահապետի Հայկազեանց,
Որի թոռն իր քաջութեամբ
Տիրեց ազգաց և ազանց։—
Իսկ երրորդ բառն է անուն
Երկրորդ նախահօր հօրը,
Որ քաղաքակիրթ ազգայ
Նախահայր եղաւ թոռը։

Խմբագիր-հրատարակիչ՝ **ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ**

Типографія И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1—2.
Дозволено цензурою. Тифлисъ, 22-го января 1898 года.

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА НА 1898 Г.

На ежедневную политическую, литературную и эконом. газету

НОВОСТИ

и на еженедѣльный художественный журналъ

ПЕТЕРБУРГСКАЯ ЖИЗНЬ

Изданія ВЫСОЧАЙШЕ утвержд. акціон. общества

„ГУТТЕНБЕРГЪ“

Подписка на „НОВОСТИ“ въ 1898 году.

На 1-е (б о л ь ш о е) изданіе:

Безъ доставки на годъ 14 р. 50 к. 11 м. 13 р. 10 м. 12 р. 9 м. 10 р. 50 к. 8 м. 9 р. 80 к. 7 м. 9 р. 6 м. 8 р. 5 м. 6 р. 80 к. 4 м. 5 р. 50 к. 3 м. 4 р. 2 м. 2 р. 80 к. 1 м. 1 р. 50 к.

Съ доставкой по городской почтѣ на годъ 16 р. 11 м. 15 р. 10 м. 13 р. 50 к. 9 м. 12 р. 8 м. 11 р. 7 м. 10 р. 6 м. 9 р. 5 м. 7 р. 50 к. 4 м. 5 р. 80 к. 3 м. 4 р. 50 к. 2 м. 3 р. 30 к. 1 м 1 р. 80 к.

Съ пересылкой иногороднимъ на годъ 17 р. 11 м. 15 р. 50 к. 10 м. 14 р. 50 к. 9 м. 13 р. 50 к. 8 м. 12 р. 50 к. 7 м. 11 р. 30 к. 6 м. 10 р. 5 м. 8 р. 50 к. 4 м. 7 р. 3 м. 5 р. 50 к. 2 м. 4 р. 1 м. 2 р.

За границу на годъ 26 р. 20 к. 11 м. 24 р. 50 к. 10 м. 23 р. 9 м. 21 р. 8 м. 18 р. 50 к. 7 м. 16 р. 6 м. 14 р. 5 м. 12 р. 4 м. 10 р. 3 м. 8 р. 2 м. 6 р. 1 м. 3 р. 50 к.

Подписывающіеся на «НОВОСТИ» вмѣстѣ съ «ПЕТЕРБУРГСКОЙ ЖИЗНЬЮ»

доплачиваютъ къ подписн. цѣнѣ на „Новости“ (каждаго срока) только одинъ рубль.

РАЗСРОЧКА платежа годовой подписной цѣны допускается: для служащихъ—по третямъ черезъ ихъ казначеевъ, а для другихъ лицъ—по соглашенію съ конторою.

Деньги и письма адресуются: Петербургъ, въ контору газеты „НОВОСТИ“ (Б. Морская, № 33). Адресъ для телеграммъ: Петербургъ. „Новости“.

Подписка на „Новости“ вмѣстѣ съ „Петербургской Жизнью“ представляетъ ту выгоду, что подписчикъ за прибавку одного рубля къ подписной цѣнѣ газеты пріобрѣтаетъ еженедѣльный иллюстрированный журналъ, заключающій въ себѣ обширный беллетристическій, научный и др. матерьялъ и массу художественныхъ воспроизведеній событій дня. Прибавка одного рубля не покрываетъ даже расходовъ на пересылку журнала, стоющую болѣе рубля, и такимъ образомъ, подписчикъ получаетъ журналъ даромъ при нѣкоторой приплатѣ со стороны редакціи къ стоимости пересылки.

Условія отдѣльной подписки на иллюстрир. журналъ

„ПЕТЕРБУРГСКАЯ ЖИЗНЬ“

1898 *года.*

Подписная цѣна журнала: безъ доставки и пересылки: на годъ—5 р., на 6 м.—3 р., на 3 м.—1 р. 75 к. Съ доставкою и пересылкою: 1 годъ—6 р. на 6 м.—3 р.. на 2 м.—1 р.

Журналъ выходитъ по воскресеньямъ.

При конторѣ газеты «НОВОСТИ» открыты

Книжный магазинъ и читальня,

услугами котораго подписчики „НОВОСТЕЙ“ пользуются на льготныхъ условіяхъ.

Отвѣтственный редакторъ-издатель О. К. НОТОВИЧЪ

IX ՏԱՐԱԶ IX

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտան. ընթերցանութեան համար:
Հրատարակւում է նոյն ուղղութեամբ, ծրագրով եւ աշխատակից-
ների մասնակցութեամբ:
Տարազը լոյս է տեսնում ամեն կիրակի, իւրաքանչիւր № 1-2 թերթ.

Ս Ր Ա Գ Ի Ր

Գեղարուեստ եւ դիտութիւն: Պատմական, ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական գրւածքներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն: Կենսագրութիւն: Կար, ձեւ, ձեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային, արդիւնագործութիւն, տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկած: Երաժշտութիւն եւ Թատրոն: Լուրեր, տեղեկութիւններ: Ցօղւածներ եւ այլն: Ֆելիետօն, ծաղր, առած եւ կատակ: Շախմատի եւ այլ խաղեր, Րեբուս: Հարցեր, խորհուրդներ: Այլ եւ այլք: Սուբհանդակ:

Հեռու առօրեայ, աշխարհային ինտրիգներից, նեղբւած գեղեցկին և ճշմարտին՝ հայ գրական անդաստանում **ՏԱՐԱԶԸ** *մեծ պարտք և դեր ունի կատարելու...*
ՏԱՐԱԶԸ *հասունացած հայ պատանիների, երիտասարդների և նոյն իսկ ծերերի թէ դպրոցն է, թէ թախծալից ժամերին նրանց բարեկամը:*

Ներկայ 1898 թ. կրապագրւեն **Տարազում** ի միջի այլոց **Էմիլ Զոլայի** նշանաւոր վէպը որ լոյս չըտեսած այնքան մեծ աղմուկ հանեց աշխարհիս բոլոր գրական աշխարհում և միաժամանակ բնագրի հետ տպագրւում է եւրոպական բոլոր լեզուներով: Բացի այդ կը-
տպագրւեն մի շարք վէպեր և պատմւածներ, որոնց թւումն է և՝

ՊԱՐԻԶ

շատ մեծ վէպ, **Բագւոյ բուրժուազիայի, գործարանատէրերի եւ Բալախանի գործաւորների կեանքից:**

ՓՇՐ ՓՈՂԱՍՔ

Ք. ԳՔԱՆ ԳԱՂՏՆԻՔՔ

վէպ Կ. Պոլսոյ սուլթանների կեանքից: Քաղաքական և ներքին աշխարհ Տաճկաստանի, ազգային սահմանադրութիւն: Ընկէրներ, վէզիրներ, հոգեւորականութիւն և ժողովուրդ:

ՏԱՐԱԶԻ *պրէմիան—* **ՄԱՅՐԱԿԱՆ ԲԱԽՏ** *մի մեծադիր խրոմօ է, սքանչելի պատկեր, պատրաստւած Եւրոպայի ամենանշանաւոր գործարանում, փառաւոր զարդ հայի դահլիճին:*

ՏԱՐԱԶԻ տարեկան գինը 6

ՐՈՒԲ. ՄԱՅՐԱԿԱՆ ԲԱԽՏ պրեմիայով եօթը ր. (արտասահման 10 ր. կամ 30 ֆր.): Ամիսը՝ 50 կ.

Իւրաքանչիւր պրեմիան առանձին արժէ 3 ր.: Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցեով գուրգ բաժանորդը, երկու պրեմիաների ձանապարհածախս պիտի է վճարի միայն մէկ ռուբլի:

Հասցէն՝ **ТИФЛИСЪ** редакція иллюст. жур. **ТАРАЗЪ** կամ Tiflis (Caucase)
Réd. du jour. Taraz.